



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 23

— Զ Ե Ա Ր Ա Պ —

4 ՅՈՒՆԻՍ 1905

Կ. ՊՈԼՈՑ ՀԱՄԱՐ		ԳՍԻԱՌ-ՈՅ ՀԱՄԱՐ		ՍՐՏԱՍԱՀԱՄԱՆԻ	
Տարեկան	50 Դր.	Տարեկան	54 Դր.	Տարեկան	12 Ժր.
Վեցամսեայ	26 »	Վեցամսեայ	27 »	Վեցամսեայ	6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԾԱՌԱՅՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՑՆԵՐՈՒ, ՇԿՐԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵԳԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին տալ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ
մը նորեղով ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛
Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրիշ եղա՞ծ յանձնարարութիւնք անմիջապէս կը կրտսար-
ուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹՐ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մեջ ամենեւնի
բարձր պարգեւէն արժանացած են :


Հասց 40 փարսա

ԱՐՏՈՂԱՏԷՐ — ՄԻՄԻՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتابخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ԶԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պատը-Աղի ճաշսկի քիւ 23



Ձեռքի, ոսկի ու ոսկի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Սնկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է, սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ գիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԱՍՆԱԳ. ԶԱՊՈՒՄՆԵՐ

ԲՆՐԱ

- (1. Անձ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին.
(2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱՆԱԹԱ

- (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
(2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համամ.
(2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13.

ՍԵԻՍՅԱՐ

- Զարչը Պոյու, թիւ 120.

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնահիշդեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղզուլուի տունը:

ՖԷՆԻՔՍ ՕԹԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Քրանֆ

ՀԻՐԵՀԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Քրանֆ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք:
ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մադեկային
կանքի վրայ:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգինաւի՝ եւ առագաստանաւի վրայ:

Ընկերութեան ղեկավարութիւնն է ՔԻԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասեն-
ճակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիւազոր ճերկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՂ 23

ՇԱԲԱԹ

4 Յունիս 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդարաններու տուրք. (Խմբագրական). — ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿՆԱՆ : ԱճԻԼՆԵՐ (Օթլումներ). — ԼԵՒՈՆ ՇԱԹՐԵԱՆ : Կարապետ Ոսկեան . — ՆՐ. Մ. ՃԻԻՀԵՐԵԱՆ : ՆԵԱՆԱԺԻ մը խօսքեր (Զգացումներ). — ՄԱՔՐՈՒՀԻ : Կսակա . — ԹՈՐԴՈՄ : Ալեմ-սաղիի կեանքէն . — ԼԻԼԱ : Տուայսան (Ոսանում). — ՀՐԱՆՏ ԱՇՈՏ : Գռեհիկ օրերներ . — ՆԵՐՍԷՍ ԶԱՔԱՐԵԱՆ : Մամիկիս տղապէն . — ԾԱՂԿԱՔԱՂ-ՅԵՐԵԿՈՒԿ : 10,000 Տարի Սառնակոյի մը մէջ . (Հանրագիտակի քերթոնը) LOUIS BOUSSENARD (Թարգմ.) Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐՈՒ ՇՈՒՐՋ

Առաջնորդական թեմէ մը Պատրիարքարան հասած հանրագրութիւն մը որ բոլորքախառն յայանութիւններ կը պարունակէ տեղւոյն Առաջն. Տեղապահին մասին, բաւական ուշադրութեամբ մը կը պարզէ և կատարելապէս կը պատկերացնէ այն անկերպարան վիճակը, որուն մասնաւոր է այսօր այդ թեմը իր Առաջն. Տեղապահին շնորհիւ :

Տեղացիք առաջին անգամ չէ որ կը բաղդեն սակայն, և խնդրանք խնդրանքի վրայ կը տեղեկացնեն Պատրիարքարան որ հեռացուի ալ այդ թեմէն այդ վարդապետը, որ եկեղեցիին ու դպրոցին ու է օգուտ չունենալէ զատ, ընդհակառակը քննադատ հանգամանք մը առած է մանաւանդ վերջերս, ուր աւելի ցոյցտուն ու աչքառու կերպով ի յայտ եկած են անոր ընթացքները :

Եթէ չենք սխալիր, տեղացիներուն այս բողբոջը, իր նախորդներն ալ ունեցած է առաւել կտամ նուազ յայանութիւններով :

Թեմականները, գիտնալով սակայն թէ իրենց Առաջն. Տեղապահը, հակա-

ռակ իր անուղղայ ընթացքին, մեծ համակրանք կը վայելէ վարչական շըրջանակներուն մէջ, չեն պահանջեր որ պատիժ մը անօրինուի անոր, չեն պահանջեր որ կարդաղուրկ ըլլայ ան։ Մարդիկը չա՛տ վեհանձնութեամբ և անօրինակ ներողամտութիւնով կը խնդրեն միմիայն որ իրենց թեմէն հեռացուի անիկա, իրենց եկեղեցական ու կրթական գործերուն չը խառնուի այլ ևս, և այլուր պաշտօնավարէ, եթէ երբեք ուրիշ թեմեր տրամադրութիւն ցոյց տան իրենց գրկին մէջ առնելու զայն։

Թէ ո՞րքան արդարացի պահանջ մըն է թեմականներուն այս խնդրանքը, և ո՞րքան իրաւունք ունին անոնք հեռացնելու իրենց թեմէն այդ վարդապետը, չարժեք բնաւ խնդիր ընել, որովհետեւ ինչ յայտնութիւններ որ կ'ընեն իրենք այդ բողոքագրերով, և ի՞նչ խօսքեր որ կ'ենեն ամէն ազգայիններու բերնէն ի մասին այդ վարդապետին շահատակութեանց, ինքնին պերճախօս ևն արդէն և հեռու են բոլորովին ձրի ամբաստանութիւններ ըլլալու պարագայէն։

Թեմականները այնքան պաղած, այնքան ուժացած են իրենց հոգեւոր հովիւէն, որ իրենց այս վերջին խնդրանքը նկատողութեան չ'առնուելու պարագային, սրոյշած են թողուլ իրենց եկեղեցին, ինչպէս գրած են իրենց հանրագրութեան մէջ։

Մարդիկը իրենց կատարեալ իրաւունքին մէջ կը գտնուին և գերազանցապէս արդարացի է իրենց պահանջը, անոր համար որ, կրցած են զգալ թէ հակակրանքի արժանացած, իր Առաջնորդական պաշտօնը երեսի վրայ ձգած, և եկեղեցին ու դպրոցը իրեն խնամքներէն խալառ հեռացուցած վարդապետ մը այլ ևս չի կրնար օգտակար ըլլալ իրենց, այլ ևս չի կրնար իր պաշտօնին բոլոր պահանջումները ի գործ դնել։ Եւ այս՝ շատ բնական պատճառով, որովհետեւ ո՛չ յարգանք մը կրնայ վայելել, ո՛չ իր թոյնաբիծը պահել և ո՛չ ու ձայն մը ունենալ այն ժողովներուն մէջ որոնց նախագահելու պաշտօնն ալ ունի, իրրեւ Առաջնորդական Տեղապահ։ Եւ երկրորդ որ, ո՛չ իր քարոզները կրնան ազդեցութիւն մը ունենալ ժողովուրդին համար, ո՛չ իր խօսքերը կրնան կշիռ ունենալ հոն։

Եւ արդէն հակաբնական չըլլա՞ր ազդեցութիւնը իր քարոզներուն և իր բարոյական վարդապետութիւններուն որոնց դէմ նախ ինք է որ կը կանգնի, և որոնց հակառակը գործել իր կեանքին ամենէն գերագոյն հաճոյքն է գուցէ։

Թեմականները ալ ի՞նչպէս մտիկ ընեն զինքը, ժողովականները ալ ի՞նչպէս իրենց խորհրդակից ունենան զայն, և ի՞նչպէս իր խնամքին յանձնեն տմբոյջ թեմի մը եկեղեցական ու կրթական հոգերը։

Թեմականներուն այս թախանձանքը ամէն նախանձախնդրութենէ վեր է և գովելի է որ իրենց թեմական վիճակը բարեկարգելու համար ներդաշնակ համաձայնութիւն մը կազմած են իրենց մէջ, հարիւրէ աւելի ստորագրութիւններով հանրագրութիւն մը զրկելով Պատրիարքարան։ Ասկէ աւելի լաւագոյն և օրինաւոր բան մը չէին կրնար ընել անոնք, և եթէ իրենց եկեղեցին լըքելու խնդիր մըն ալ յարուցած են այդ գրով, պատճառն ուրիշ բան չէ եթէ ոչ սակեալ թէ՛ մարդիկը ցաւած են կատարելապէս իրենց եկեղեցին անարգուած տեսնելով վարդապետի մը արարքներուն երեսէն, ու իրենց եկեղեցական ու կրթական


պահանջումները ստանալու եղած տեսնելով իրենց հոգեւոր հովիւին քմայքնե-
րուն տակ :

Թեմականներուն պահանջը սպառնալիք մը չէ՝ երբեք, որովհետեւ իրենք
եկեղեցիէն չէ որ ուժացած ու պաղած են, այն եկեղեցիէն որուն գիրկը մեծ-
ցած ու սնած են, այլ անոր գործերուն գլուխ կանգնող եկեղեցականէն, որ
բոլորովին երեսի վրայ ձգած է իր հոգեւոր պարտականութիւնները :

Խնդիր է գիտնալ հիմա թէ Պատրիարքարանն ի՞նչպէս գոհացում պիտի
տայ թեմականներուն այս խնդրանքին, և ի՞նչ որոշում պիտի տայ, մի անգամ
ընդ միշտ վերջ մը տալու համար անոր :

Խիստ հետաքրքրական է տրուելիք որոշումը, որովհետեւ եթէ չենք սխալիր,
մեր մէջ ներողամտութիւն մը կը տիրէ հիմա, հոգ չէ թէ անըմբռնելի փութկո-
տութիւն մը տիրէ միւս կողմէն, հոգեւոր իշխանութիւններէ իբր թէ կարգա-
դուրի եղող խեղճ սարկաւազներու ատտիճանադրկութիւնը հրատարակել տալ
լրագրաց մէջ, անբաղդատելիօրէն նուազ յանցապարտութիւններու, նուազ
գայթակղութիւններու իբր հետեւանք :

ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ



ՆՇԱՆԱԾԻ ՄԸ ԽՕՍՔԵՐԸ

ՁԳԱՑՈՒՄ ՆԵՐ

Անոյ ու քաղցր քրքումներ հոգեկան,
Յոյզի, խինդի գրգռում մը կ'զգամ արդ,
Ըզնան մ'անոյ, անցիւք երազ մ'աղջրկան,
Բան մ'անց ստում, որ լոկ օր մը կ'զգայ մարդ:

Եւ ես կ'զգամ խել-խօլ վազեքը կեանքին,
Որ կը սուրան արտաւ, զքիսուր յուսերով
Արբունքի մը հորիզոնէն, մինչ հոգին
Սեւ հոգեով կը ծածկուի յար խըռով:

Սիրս սիրոյ ծով մ'է կտրած արդ համակ,
Ու յուզումն ալ՝ ալիքն անոր, կիրքն անվերջ,
Մինչ բերկրանքս, խինդքս՝ մոռնիկ մ'անյաս սկ
Որ կը յազուի, կը փոքորկի գանկիս մեջ:

Ձմրույս զինոյ մասրուակն եմ ես այսօր,
Խընջոյքն մեզ, խօսեցեալիս քելին մօտ,
Սիրով զինով, ու ամօքս զլիսկոր . . .
Եւ արեւ մեզ վեհ բան մ'ունիմ անձամօք...:

Ան՝ առաջին կայն է կեանքի եռքեան,
Երջանկութիւն մը յարսեւ, անալլալ
Սեւ մ'անյասակ, կամ վաղացիկ մի վայրկեան
Որ կը մարի սակայն ըսեալ եւ անփալլ . . .:

ՄԱՐԲՈՒՀԻ



ԿԱՐԱՊԵՏ ՈՍԿԵԱՆ

Ծաղկատի մեռած բանաստեղծներուն առաջին կարգէն կրնանք դասել Կարապետ Ոսկեան . իր մահը մարեց մեր բանաստեղծական հորիզոնին էն փաղիտուն պղպուղներէն մին : Սրտեր կան , որոնք վաղ զարթնում մը կ'ունենան կործքերու տակ , որոնք միշտ յիշատակ մը կը թողուն իրենց ստացած տղաւորութիւններէն Ոսկեանի սիրտը անոնցմէ էր : Կանխահառ բանաստեղծ մըն էր : Հանճարը լոյս մըն է ու Ոսկեանի լոյսը ա՛յնչափ պայծառ կը փայլէր երբ մահուան խորշակը մարեց զայն :

Ոսկեանի սիրտը պայծառ հայլի մը կը նմանէր , որուն մէջ ցոլացուց բնական դոյներով , ինչ որ կար իրեն հանդիպակաց : Իր սիրերդները պատանեկան երազուն տարիքին մէջ զրուած , իր խանդին ու բանաստեղծ հոգիին ճռուողիւններն էին : Իր առաջին սիրերզը , չգնազ triolet մը , որ պոլսահայ պարբերականի մը մէջ երևցաւ , նեղ սահմանին մէջ խորայնջ հոգի մը կը յատկանշէր :

Իր ոտանաւորները միջակէն վեր բան մըն են , ինքնատիպ բանաստեղծութեան դրոշմը կրող : Ամէն մարդ կը զգայ , սակայն Աստուած ամէնուն չէ տուած բանաստեղծ հոգի մը , զգացումները անմահացնող հանճար մը , որ Ոսկեանի մէջ մշակուելով ապագային մեր էն նշանաւոր քերթողներէն մին պիտի ընէր ապահովաբար :

Քսան տարու մեռաւ , կեսնքի հեռապատկերներէն հմայուած սէրը երգեց , բայց բազմը խնդաց իր վրայ , դամքեցուց իր սրտին սիրոյ աղբիւրը , սրբեց աչքին առջև պարզուած անուշ պատկերները , ու գերեզմանը , անդունդը ցցուց իրեն մօտ և ըսաւ . « մահը երգէ ասկէ վերջ » : Ախտին վախը , տխուր իրականութիւնը մահերգներու փոխից իր սիրերգները ու Ոսկեան արտադրեց , արտադրեց մահուան վրայ անանկ զգայուն սողեր , որոնց մէջ կը թրթռայ տառապող հոգին , և որոնց տակ Դուրեանը կրնար ստորազրել առանց բան մը կորսնցնելու իր արժանիքէն : —

Ո՛վ յոյս իղուր ինձ կը ժըպտիս ,
Չե՛մ ես , ա՛լ չեմ երկրի բնակ ,
Հաղիւ բացուած աչկունք սրտիս
Կը մեռնիմ ես անժամանակ :

Ու քիչ մը վար , —

Այս աւերեալ իմ մարմնոյս մէջ
Ուր չունչ մ'անդօր հաղիւ մնաց
Կենաց , սիրոյ փափաքանաց
Կը վառի դեռ հրդեհ մ'անշէջ :

Միշտ վսեմին յառած է իր քնարը Մահուանէն քանի մը ամիս առաջ Բիւրակեի 1899 տարւոյն ԷՅՐԳ Թիւրին մէջ իր մէկ վաղամեակի մտերմին յիշատակին նուիրած երկար քերթուածը , իր լաւագոյն արտադրութիւնը կրնայ սեպուիլ , գլուխ գործոց նոյն իսկ , որուն մէջ այրող տոչորսը հոգի մը կը սաւառնի :

Սաստիկ սէրը մարդուս մէջ կոյր հաւատք մը կը ծնուցանէ ու Ոսկեան այդ հաւատքին անձնատուր՝ իր մեռած մտերմինէն ձայն կը սպասէ . —

Այս էր խօստուժք . « ես կը մեկնիմ ,
Ողջ եմ սակայն , ըսիր ինձ դուն
Ջերմէն սիրոյս հաւատարիմ
Ձայն պիտի տամ քեզի ժպտուն »

Ու դարձեալ նոյն միամիտ հաւատքով կը շարունակէ .

Երբ գիշերուան մութին մէջ լուռ ,
Երկինք ջահերն իր կը վառէ ,
Սիրտս թողած ծովն ու բլուր
Քեզ անհունին մէջ կը փնտռէ :

Ու քիչ մը վար իր սիրաստոյր հոգիին ամբողջ արհաւիրքը կը խտացնէ սա չորս տողերուն մէջ . —

Գերեզմանիդ հոգին վրայ չոր
Ուր կը հոսին աչքիս արցունք ,
Կը մխայ սիրտս հրատոյժ ,
Սիրոյ անմահ տաճարին խունկ :

Մեր հրատարակիչները իրենց երեսին անցուցած «յազուրդ ազգային մանկուղին» գիմակը, ինչ շահատակութիւններ կը գործեն : Եթէ ասոնց մէջ կը գտնուին մեր գերականութեան համար իրապէս աշխատողներ, կամ եթէ կան գրասէր ազգայիններ, լաւագոյն առիթն է իրենց այդ զգացումները գործնականապէս արտայայտելու, հրատարակելով Կարապետ Ոսկեանի ոտանաւորներուն հաւաքածոն, որով աւելի հաստատ հիմքով վրայ դրուած պիտի ըլլայ այս վաղամեռ բանաստեղծին արդէն անմահ յիշատակը :

Հիմա՛, որ չորս հինգ գարուններ սահած են իր հողակոյտին վրայէն :

Տրապիզոն

ԵՐ. Մ. ՃԻՆՔԵՐԵԱՆ

MOTIF VARIÉ

Ծանօթ արուեստագէտ Ահարոն Էֆ. Մարեան, որ իբրեւ ճարտար ջութակահար համբաւ մը ունի երաժշտական աշխարհին մէջ, իւրյս ընծայած է Motif varié անուն հեղինակութիւն մը, որ կը նուագուի ջութակով և գաշնակի ընկերակցութեամբ :

Համակրելի արուեստագէտը իր այս հեղինակութիւնը ձօնած է վաղամեռիկ Պարոյր Տէր-Անդրէասեանի յիշատակին, անոր սղալի մահուան առաջին տարեւոյցին առթիւ :

Տարակոյս չունինք թէ զեղարուեստասէրները պիտի ուզեն ունենալ իրենց սալօնին մէջ այս զեղեցիկ հեղինակութենէն :

Կը ծախուի գին 5 դրոշի

Կը գտնուի Բերա՝ Քոմանտինկէրի, Քօրի և Դուլաթիա՝ Լոմֆեան վաճառատունները :

ԱՆԿԻՒՆՆԵՐ

ՕՒԼԱՄՈՒՐ

Ջարժնումը շատ քաղցր ու հաճիլի է այդ կիրակի առտու . խողաղ ու ջինջ երկինքին վրայ ոչ մէկ ամպի ծուէն, ոչ մէկ հետք որ կապոյտին կոյս մաքրութիւնը խաթարէ . պատուհանիս առջև ուր կ'երթամ առտուան կենսարար օդովը հովիւն, մեզմիւզ մը կ'առնէ կը բերէ իրեն հետ ծաղիկներուն հետ ու քաղցրաբոյր շունչը որ աղբիւր նոր եռանդ, նոր փափաք մը կը գնէ ներսս, լիաթոք ըմպելու գարնանային այս կենսունակ օդը քաղքին աղտոտ միջավայրներու մէջ ժանդոտած, հիւժած թոքերովս : Պատուհանին առջև, ծառին վրայ, որ իր զիշերու ան տամիլութիւնը դեռ կը հեռայ, ցօղաթուրմ տերեւներուն վրայ թռչուն մը կիցեր է, կտուցովը փորը կը քերէ, կը շարժի, թեւերը կը բանայ ու կը ճախրէ չեղ զիծով մը զէպ ի վեր, կապոյտներու աշխարհին մէջ, վերի անուշադեղնէն գինովցած, անոր առթած հաճոյքին մէջ անէպոտ ու վերացած :

Ինչ զեղեցիկ ատեն պոռոյտի :

Շուտափոյթ յարգարանքէ՛մը ետք կ'իյնամ դուրս, չիտակ Մօլլա-Ալաղլու Ձօտիվայրէն ուր վաթ կ'իջնեմ, և որ եղբրուած է գնչուի պզտիկ անակներով, իրճիթները կարծես վար իյնալու, ծուելու երեւոյթ մը ունին, հաւատարակչութիւնին կորուսած զինովի մը դանդաղութիւն հանգունաթոյ . վարը աչքիս առջև ձորը կը տարածուի, ծածկուած չղարչանման նուրբ շոգիով մը որ կը ծածանի, անգայտ վարագոյրի մը նման, պատրաստ արեւին առջի համբոյրին սակ պատուելու : Արեւը տակաւ կը բարձրանայ, և վարը ամէն ինչ որոշ գոյներ, յոտակ զըծագրութիւններ կ'առնէ . հեռուէն կը լսեմ լաթեօնաի մը լալկան եղանակը որ մինչև ինծի կը հասնի և որ կը մարի ձորէ ձոր, բլուրէ բլուր գարնունելով :

Վարն եմ հասած, ձորը անկանոն վիճակ մը ունի . նեղ ճամբայ մը որուն մէջտեղէն նուրբ ջուրի մապաւէն մը կ'երկնայ, կ'եր-

Թայ քարերուն հետ խաղալով իր վճիտ ցուլացումով, իր զուարթ կայտիւր կաթեցնելու բնութեան այս ամբողջական տօնին ուրախութեան հարսանիքին մէջ. ճամբան կը նեղնայ ետեւէ, երկու կողմի բլուրները կարծես ձորին վրայ կը հակին, և բնութիւնը, բեղմնաւոր ու առատապարգեւ բնութիւնը, դիտմամբ կարծես խոտով կը ծածկէ ամբողջ չորս կողմը, թոյլ չ'տալով հողի կոտորմը, որ պիտի աւրէր իր կանանչութեան ամբողջ թովչութիւնը. կանանչ, չորս դին կանանչ, խոտերը թիւ թիւ բարձրացեր են, և այժմ, թափառական մենակեաց, տարածուեր է անոնց մէջ, միամիտ աչքերով դիտելով դիտէ, կը ցատկէ տեղէն յանկարծ, կը մագլցի բլուրն ի վեր, լսելի ընելով զանգակիկին ձայնը որ իր վիզէն կախուած է և որ տակաւ իրեն հետ կը հեռանայ, կը մարի ծանցառօրէն, տեղ տեղ, մէկ քանի ընտանիքներ կան, առտուանց նախաճաշին ընելու զբաղած, և առտուան արցունքները դեռ կը չողան խիտմ խոտերուն վրայ:

Կը նստիմ տեղ մը, առանձին, ըմբռնանելու պահ մը, զգալու վայրկեան մը գէթ այն գինովութիւնը զոր բնութիւնը կը բերէ կը դնէ ներսս այն միջոցին: Առտուան դովութիւնը սակայն կամաց կամաց կը ցնդի ցորեկուան տաքին տեղի տալով որ տակաւ կը տարածուի, կը շաւնայ, կրակէ ծածկոցի մը նման ձորին վրայ իջնելով: Ծառերն ու խոտերը կարծես հեշտութեամբ, գրկաբաց կ'ընդունին այս տաղը որ զիրենք կը չորցնէ, նոր ուժ մը կուտայ իրենց, աճելու նոր եռանդ մը. ծաղիկները սակայն գլուխին կը ծռեն այս մեծ ուժին հարուածին տակ ու խոտերուն գիրկը, մեղմիւ կը հանգչին:

Տաքը անտանելի կը դառնայ և շուտափոյթ կը մեկնիմ բարեկամի մը տուն:

* * *

Իրիկուան դարձը աւելի գոյար է. ըստուերները արդէն կ'երկարին, կը մեծնան երբ կը հասնիմ Օխլամուր:

Մօլլա-Այազմաէն աւելի գիւղին մօտ աղւոր պարտէզ մը, բնութեան պարտէզ որ դեռ չ'է զոյգմ մարդուն ձեռքը: Օխլամուր տարբեր երեւոյթ մը ունի. Օխլամուրի խոշոր ծառերը, որոնց հասովը այնքան կը սիրեմ

գինովեալ դեռ չ'են բացուած, բայց խորհրդաւոր չուք մը ունին, որ անտառի մը պատրանքը կուտան քելի, ժամը գիշերուան մէկն է և արդէն անցորդները կ'սկսին ցանցաւնալ ճամբուն վրայ. վարդերու, մանիշակներու անուշ հոտ մը կը ծածանի օդին մէջ, կեռնելի մը արի սուլումը լսելի կ'ըլլայ ծառի մը զագաթէն, շիկահաւի մը շաղիւղիւղիւնքը կը քնանայ, ամէն ինչ լուռ: Ու այս լուռութեան մէջ, ստուերներու այս խորհրդաւորութեան մէջ, բուրումներու մէջ սոխակը կը նախերգէ, հատկաւ խաղեր են նախ, որոնք վերջը երկարածիք, հատնող եղանակներու ու շեշտերու կը յանգին, և թուշուր, գարնան գիշերներու այս վտեմ երգիչը, կը թողու հոգին զեղուլ խօլ դաշնակութեանց մէջ ինքն ալ իր ձայնովը գիւնովցած ու վերացած: Կը քալեմ:

Մօլլա-Այազմաի ձորը ոչ ոք աս ատեն. յետամնաց անցորդ մը, կլլողական ժողովի յամառ անգամ մը, կ'անցնի քովէս գլտորելով, քիթին տակէն բաներ մը մուտալէն, երջանիկ մարդ կը մտածեմ ինքնիրենս ու կ'անցնիմ:

Հեռուն, ֆէնէրի մը լոյսը կը պլպլայ, կը մօտենամ, «Հարտախի» ի մը տակ, տասը տասներկու հողի բողբոլներ են, օդին շիշերը մէջտեղ, սեղանը աղանդերներով առլի, բեղմնաւոր, չորցած կոկորդիներու հրաւէր կարդալով կարծես, բարեկամներ են ամէնքն ալ, գիւղացի տղաքներ:

— Բարե միւսիւ Հեռուն.

— Բարե Պարթե աղա, բարե Երուանդ:

Քովերին ինձե-սաղի աղուոր խումբ մը կայ որ արեւելեան եղանակներու անուշ հեշտանքը կը ծորեցնէ ներկաներուն սրտին մէջ, ալքովին առթած զուարթութիւնը ու եռանդը իր մեղկացնող շեշտերով ու խաղերով թեթեւցնելով. ամենքն ալ ուրախ են, չորջերմիս ոչ ոք, գիշերային հանդարտ լուռութեան մէջ ջուլթակին քաղցր և ուտին զօրաւոր ձախը կը բարձրանայ մեռած սէրերու, տխուր անցած յիշատակներու վերջիջումը ցանկելով ամենուս ալ հոգիներուն մէջ. ո՛վ ըսեր է թէ կը մտածեմ ինքնիրենս, ալքով պէտք է մեռցնել, ան մարդուն յոգնատանջ, ցաւերով բեռնաւոր կեանքին պահ մը ինքնամոռացում նուիրողը, ան բժշկող

ու մոռցնող բաղասանը ամէն վէրքերու, ամէն լիշտերու, ան գոնէ վաղորդային, տխուր ու քայքայող վաղորդային ցաւերը մտածումները ծածկողն ու վայրկեանի մը զուարթութեան պատրանքին մէջ գէթ երջանկութեան մէջ զայն օրօրօլը :

Բաւական մը նստելէ ետք հրաժեշտ կ'առնեմ իրենցմէ և կը յառաջանամ մութին մէջ, խոշոր ծառերով ելերուած ճամբուն վրայէն և հեռուէն դեռ կը հնչէ, երջանկութեան երանութեան կոչի մը պէս, երգեցիկ երիտասարդներու անուշ ձայնը որոնք կը հալին վաղահաս մութին, գիշերուան ըստուերներուն խորհրդաւորութեան միջև :

Երջանիկ տղաքներ :

ԼԵՌՈՒ ՇԱՅՐԵԱՆ

ՏՈՐԱՅՏԱՆԵ

Դիւերային ամալութեան մէջ լռիւն,
Ուր բնութիւնը կը նիւհէ խոնկեմէն,
Ու չը լուսիւր ո՛չ իսկ ձայն մը ջրամագին,
Դիւեր երկիւմէն վարալոյրիս բացումսմէն :

Անհաւանութեան այդ աւաւորին մէջ քրքուռն
Լոյսերը վառ մինչ կը փայլին գիւթական,
Ու մինչ լուսինն ցոլեւորն տա՛յ անպարտում,
Բիւր հմայմէն կը կաթիլիւն խօսկան :

Հակ սպասկեւ մ'ա՛խ կը կարծեմ ես տեսել.
Իմ հոգիիս անդունդներուն մէջն անել,
Եւստաւագեցիկ ու մքաստուեր վիճ մ'անհուն
Ուր չը շողար յոյսի նոյլ մ'իս' պլպլուն :

Ու միայնակ այսպէս նստած ջրամաքով,
Կը մաքսով մօտերուս հեջ դառնագին,
Դեք մէկն ըլլաւ խօսեւորմի իր նոյնքով,
Սպ'ացնող սեւ-վերքեր իմ օրսին . . . :

Նիկովիդիա

ՀՐԱՆՏ ԱՇՈՏ

ԿՏԱԿՍ

Մահուան մօտենալուն՝ վախէս պիտի դողդղամ, արտաքոյ կարգի բաներու աշխատեալ պիտի ըլլամ, որով անկարելի պիտի ըլլայ այդ պահուն աճապարանօք կտակ մը շինել, ժառանգորդներու երկդիմի չձգելու համար :

Առ ի նախատեսութիւն այս ամէնուն, և նամանաւանդ մեռնելէս վերջը ետեւէս բոկ չտալու համար որ՝ այսինչը անխելք մըն է եղեր, որ կենդանութեանը կտակ մը իսկ չգրեց և ժառանգորդները այսպէս բացը ձգեց, պարտք կը համարիմ կտակս շինել, ազագային ու է հետեւութիւններու տեղի չտալու համար :

Եւ այն ատեն ա՛լ երբեք հոգս չէ որ պիտի մեռնիմ, քանի որ կտակ մը չիմած եմ խղճմտօրէն և վաւերացուցած՝ ի ներկայութեան . . . ի մէջ այլոց իմ :

Entre nous, չիտակ խօսելու համար ըսեմ որ, պէտք չէր որ այսքան ատեն ապրէի . . .

Բայց, ինչո՞ւ այս տեսակ խոստովանանք մը, ճիշդ տեղն է հոս ըսելու, և ձեր հետաքրքրութիւնն ալ յագեցնելու որ՝ եթէ այսպէս ապրելս չարունակեմ՝ ահողջ աշխարհ պարտատէրս պիտի ըլլայ, ժառանգորդներս պիտի չառնան, մտածումներս պիտի աւելնան և վերջապէս կեանքը այնուհետեւ անտանելի պիտի դառնայ ինձի :

Այո՛, պէտք չէ որ ապրիմ, որովհետեւ գիտեմ որ մեռնելէս վերջը պարտատէրներս ընդարձակ հաշուեցուցակներով ժառանգորդներուս պիտի ներկայանան, պահանջելու համար այն պարտքերս՝ զորս կամայ աւկամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ ըրի, միայն և միայն ժառանգորդներուս ծնունդ և մեռնիք տալու համար :

Արդ ի ստորեւ պիտի գտնէք կտակիս պատճէնը, որուն անխտիր գործադրութիւնը մահուանէս վերջ ժառանգորդներէս կը պահանջեմ :

— Հացագործիս քեթիկին մէկ սինակը տալած եմ առանց իր հաւանութեան, այս

մասին բան մը մի յայտնէք իրեն, թե երև խելճին միտքը պղտորի և վճարած հաշիւներէս ալ պահանջող ելլայ :

Գալով պարտքիս, աջակողման դրացիս, որ հարուստ մըն է, թող հաշիւը մաքրէ, որպէս զի Աստուած ալ իր անունը մեղաւորներու ցանկէն աւրէ :

— Եօրկի Վաֆիտիս որ ալեւոր ծերուկ մըն է, ամենէն խոշոր պարտատէրս է, մասնաւոր բարեւներս կը խօսիք իրեն իմ կողմէս, ու կըսէք որ թող անպատճառ երկինք գայ, կառքին դրամը ինէ, և պահանջէ ի ներկայութեան հրեշտակաց և հրեշտակապետաց այն պահանջը զոր դժուար եղաւ ինծի համար երկրի վրայ վճարել :

Խրատեցէք պառպան, որ 20 % տոկոսէն աւելի հաշիւ չներկայացնէ :

— Պահանջներս, « պահանջատիրաց » ինստիտուտ տետրակիս մէջ գրած եմ, մասնաւոր դրոշներս կտակս բանալէ երեք օր վերջ՝ կրնան օրինական ամէն ձեւակերպութեանց ձեռնարկել և կարելի եղածին չափ շուտ առնելիքներս գանձել, իսկ անվճարելի մընացած պահուն կրնան մէյմէկ բնօրէս պահանջատէրներու քիթերուն տալ :

— Զախակողման դրացիիս, որ բաւին բովանդակ նշանակութեամբ աղքատ մըն է, է՛ն վերջի դնած (երկու տարի առաջ) հազուատներս կը նուիրեմ, և կը յանձնարարեմ իրեն որ բանթօլօնիս տակի երկու ծակին մէկ հատը միայն կարել տայ և միւսն ալ իր վիճակովը հազնի, և իր այս հնազանդութեան հարմար կանխաւ շնորհակալութիւնս կը յայտնեմ, (տեսնելով որ մարդոց մէջ չատեր իրենց գլուխներն վրայ ծակեր բանալ կցւան, ես ալ փոխանակ դիտուս վրայ ծակեր շինել տալու, որ միայն գլխուն օգը փոխելու պիտի ծառայէ, տակը ծակ բանթօլօն մը գնեցի, որպէս զի օգը այդ ծակերէն ամբողջ մարմնոյս փոխանցէ ու ես առողջ ելլամ. ինչպէս կը տեսնէք, նպատակը նոյն է, տարբերութիւնը միայն ծակերուն զատ զատ տեղեր բացուած ելլալն է :

Կարծեմ կրցի հասկընել թէ ինչո՞ւ բանթօլօն ծակ է) :

— Գրասեղանիս դարակներէն մէկուն մէջ դպրոցական եղած ատենէն մնացած հինգ հատ բարենիշ կայ, ամէնքը մէկէն

Կալիստիոս տուէք, պայմանաւ որ ան ալ իր կտակին մէջ նոյն այդ բարենիշները Բ. Լուսթիւնեանին կտակէ :

— Թառներս վարժապետ կամ վարժուհի թող ըլլան, անգործութեան տոկոսին « Ուսուցչաց օգնութեան անուակ » ին զիմեն և զորո՞ չունինք պարապ ենք ըսելով դրամ պահանջեն ? (*) :

Խրատական :

— Խրատեցէք ձեր բարեկամները որ « Ուսուցչաց օգնութեան անուակ » ի կարօտ ուսուցիչներ չըլլան :

— Ո՛վ որ ըսէ թէ էջութիւնը դրամով չառնուիր, դուք ալ իրեն ըսէք որ Բեսարակ սուր երթալու համար առանց դրամի էջով չեկուիր :

— Մարդը մարդով, հագուստը իր դրոշմաներով կրլլայ :

Վերջապան :

Ողորմութեամբ Աստուծոյ կտակս կնքելով անկողինիս բուրդերուն մէջ կը պահեմ, և կը խնդրեմ սիրելի ժառանգորդներէս որ՝ կտակս չի բացած անկողինս չի ծախեն :

Ծանօթ. — Նախապէս կտակս ո՛ւր պահելս ոչ մէկու յայտնած եմ :

ԹՈՂԵՐՈՍ

(*) Ինչո՞ւ համար միայն ուսուցիչները օգնութեան անուակ ունենան, ու նպարավաճառ, գրագիրը, կառապանը, խմբագիրը, տնտեսը, ժամկոչը, քահանայն, թահսիրտարը, բեռնակիրը, լրագրավաճառը, տղաքները, չափահասները, ծերերը, կաթնավաճառները, հացագործները, աշկերտները, թէզկեհատարները, և վերջապէս ամէն անոնք, որոնք գործով մը կը զբաղին, ինչո՞ւ իրենց զատ զատ օգնութեան անուակները չունենան :

Հաւատացէք որ եթէ ամէն արհեստաւոր իր անպողտ ունենայ, այն ատեն ոչ մէկը ուսուցիչ պիտի ուզէ ըլլալ. Օրինակ մը տալու համար, ըսեմ որ անցեալները բարեկամ ուսուցիչ մը փողոցը տեսայ ու հարցուցի որ զատս խօսութիւններ կընէ՞ կոր, ու փարս կը վատարկի՞ կոր. « Կեցցէ Ուսուցչաց օգնութեան անուակ » ըսելով հեռացաւ, զիս զարմանքի մէջ ձգելով. այսպէս, զորն ասեմ կամ զորն խոստովանիմ :

ԱԼԵՄ—ՏԱՂԻԻ ԿԵԱՆՔԷՆ

Կարգ մը հիւանդութիւններ կան, որոնցմէ բուժուելու, աղաքինելու համար Տօթթօնին դեղագիրէն աւելի բնութեան և մթնոլորտին ոգնութեան կը կարօտի մարդ։ Այս կարգէն էր Ալեմ-տաղի ըստած տեղը, առկէ քսան եռեսուն տարի առաջ, ուր հիւանդանոց կ'անուանուէր, և ուր բժիշկները իրենց հիւանդները կը զրկէին, կամ ասպին կամ անդին վճռական եղբ մը տալու համար իրենց քահանայքին նշաւակ ճամբորդները։

Բայց տարիներու հոլովական վաղքին մէջ խնդիրը նոյնը չի մնաց, ինչ որ էր առաջ։

Նախորդ Ալեմ-տաղին, որ իր գեղջուկ պարզութեանը մէջ իր դարմանատուն կը յիշուէր, հիմա Բըքի-Բեքա անունով կը ճանչցուի, և աւելին՝ մեր ինտելիքեցի և հայ-լայֆ դասակարգին Մայիսի գրօնարանը դարձած է, շնորհիւ եթիքթին, լիւքսին և քուպիքթին, որ կը տիրէ հոն տարիներէ ի վեր։

Այսօր անանկ մը եղած է որ, Ալեմ-տաղի կը լիւր, ու հոն քսան եռեսուն օր կենալը հարստութեան, կարողութեան նշան, իսկ բնաւ չեղած տկարութեան, կուտարդութեան (?) յատկանիշը համարուած է։ Ահա ինչու ամէն տարի Մայիսին, մեր համայնքին ձեռքը բերին ճանաչող ընտանիքները հող կը զիմեն, մաքուր օգը ջուրը վայելելու ելին, ըսել տալու համար թէ՛ «այսինչ» ներն ալ այս տարի Ալեմ-տաղի էին . . .»։ Ինչ փառք, ինչ երջանկութիւն . . .»։

Առաջ հող գացող կիները պարսա ֆիտտանով կը պտըտին եղեր, հիմա, երեք սընտուկ հագուստ կը տանին հետերին, շաբաթը երեք չորս անգամ փոխուելու համար։

Առաջ, խմելիքնին միմիայն քալ-ձակողի ջուրն է եղեր իբր օգուտ, հիմա Ալաքեմ պիտն է որ կանցնի և կը գործածուի։

Առաջ, Էրիկմարդիկ գիշերնոցով կը պտըտին եղեր գիւղին մէջ, հիմա սե քոսթիւնով և կանթերով կը չրջագային 7 1/2 սանթիմ օձիքը վիզերին։

Վերջապէս, առաջ հիւանդ կերթային

առողջանալու համար, հիմա առողջ կ'երթան հիւանդ դառնալու համար։

Պայտղներուն չէ խօսքս, ոչ ալ ամէն անոնց՝ որոնք վարժ երկրաչափի մը պէս չափած չափոված են Ալեմ-տաղի անտառները, այլ այդ վայրը ներկայացնել կուզեմ այն դժբաղդ մահկանացուներուն, որոնք պատահութիւնը չեն ունեցած վայելել այդ սիրելիքի վայրը։

Երեւակայեցէք ընդարձակ անտառներու մէջտեղը տուներու պարփ մը. հոս երբ տուն կ'ըսեմ, դուք պէտք է հասկընաք հաւերու քիւմեփի պէս քառակուսի փայտաշէն և հողածեփ խճիթներ, ուր կուգան ապաստանիլ՝ քոստե տոնալ դնող Բէռազիէն օրորդները, մօնօրլ գործածող միւսիւ բեռօքները, սպասուհիին՝ գուլպաները հագցնել տուող մատամները, և իր գրադիրին տասը քսան ոսկի ամսական տուող ջոլ վաճառականները։

Տարեոյն երկու ամիսներուն՝ Ապրիլին և Մայիսին բնիկ գիւղացիները կը քաշուին իրենց բնակարաններէն, տեղ տալու համար օտարներուն։

Այս միջինիկ գիւղակը իր ցատկոտեկ հիւղակներուն մօտ միջինիկ եկեղեցի մը ունի թէք քահանայով, որ տեղւոյն թէ Տէրտէրն է, թէ վարդապետը, եպիսկոպոսը, լուսարարը, ժամկոչը և ամէն բան։

Գիւղին մէջ պահող ո՞ր ալ կայ, որուն տէրն ու տնօրէնն է ճանօթ Յովակիմ աղան, որ հակառակ իր 50-60 տարիքին, քսան տարեկան երիտասարդի մը պէս կը դառնայ իր դործին չուրջը, և լաւ զիտէ խախտացնել իրեն զիմող յաճախորդներուն գրպանը։ Մարդուն հոմեմտա կը խօսի, ու սեղանէ սեղան կանակը կ'անցընէ այն օտիմիւլ ֆըռտքը, զոր միայն տեսնելու համար կ'արժէ զիմել իր պահողը. այնքան հետաքրքրաշարժ երեւոյթ մը ունի ան։

Ալեմ-տաղի գրօսա լայրերն են՝ մեծ պղղտիկ Էլմալըները, Թալ-տէլիքը, Խոռ-պոչլին, Պաքաճին և Բօյօնեզ գիւղը։

Չեմ գիտեր ի՞նչ հով մը ունի այս գեղա-
հրաշ վայրը, ուր դիմողները քիչ օրուան
մէջ իրարու աղգականի պէս կը սիրուըտին,
կը տեսակցին ու կը կապուին այնպիսի սերտ
յարաբերութիւններով, որ մինչեւ իսկ ա-
պագայ խնամութիւններ կը յօրինուին իրա-
րու մէջ:

Ալէմ-տաղիի էն փայլուն և զըօսական օ-
րերը կիրակի և Ներկուշաբթի կըլլան միշտ,
իսկ շաբթուան միւս օրերը ճաթելիք սըրտ-
նեղութիւններով կանցնին:

Այդ ամառանոցին ընտանեկան յարաբե-
րութիւններուն վրայ գաղափար մը տալու
համար, հոս պիտի նկարագրեմ ընտա-
նիքի մը խօսուընտուըը, որ պիտի կըր-
նայ ճիշդ պատկերը նուիրել ձեզ այն տաք
անթոքլասէին, որ կ'ունենան հոգ գացող
ընտանիքները:

* * *

— Ինծի նայէ մատամ, աս օր թաշտէ-
լէնը վազ անցնինք տէ, ուրիշ տեղ մը եր-
թանք մենք մեզի, զէրէ աղէկ չեմ տեսնար
կոր . . .

— Տէր ողորմեայ ըսէ, Գիրգորիկ աղա,
իճատ մի հանէր կէնէ, մարդս մարդով է,
մինակնիս երթանք ճգնե՞նք պիտի . . .

— Դուք աս տեղը օյի՞ն սէյր ընելու ե-
կաք, չէնէ մի հաւա թէպտիլի, սա հաս-
կընանք, աս ուռուտումին սօնք ե՞րբ պիտի
առնենք . . .

— Ես վախիթ չունիմ միսմինակս ճաթե-
լու, զաթը աղջիկներն ալ չեն ուզեր, չեն
ի գար, կրնան է չօճուխներուն . . .

— Ինծի կրնան չէ զահէր, եկայ նէ ա-
սանկ էի, սա երեսիս տէրիները նայէ,
քուռչի պէս կախուեցան սիրտ փոր հասցու-
նելէն . . .

— Բա ճանրմ ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ, ին-
ծի ալ ըսէ քի հասկընամ, ես եմ նէ բան
մը չեմ տեսնար կոր . . .

— Տահա ինչ պիտի ըլլայ, տահա աղ-
ջիկներս ժողուած տէ չայիրին վրայ խուզի
մը կերած չունիմ, պիտի տիւզ բիացայ կընեն
կոր, խոշ իրենք խապահաթ չունին ես . . .
նէիսէ . . .

— Ատտար մը կըլլայ, ասոր աստեղը,
Ալէմ-տաղի է, Սաղմոս քաղելու չեն ես,

սըտեղը որի՞ հետ կը տեսնուին կոր . . . ա-
մէն մարդ փարայ կը կերցունէ քի անանկ
Փամիլեայի մը հետ խայնամիշ ըլլայ տէյի . . .

— Հա ախ, ասոնք խայնամիշ ըսելնի-
քէն թաշմիշ, քէօբլումիշ կըլլան կոր . . .

Եւ հաղիւ այր և կին պիտի չարունակէին
իրենց խօսքը, յանկարծ վարը փողոցէն ձայն
մը . . .

— Ա՛ս ի՞նչ է . . . տահա պառկե՛ր էք . . .

— Նա՛, խապար պէօճէյիները պաշա-
յեցին . . . հիշ ըռահաթումին չիգայ քի . . .

— Սուս ճանրմ կ'իմանան, անոնք քու
գիտցած մարդիկդ չեն . . .

— Ով կուզէ նէ ան ըլլայ, կէօղ կէօրէ
մէզէ ալ չեմ ըլլար . . .

— Սո՛ւս . . . քրտինք կը կոխէ կոր վը-
րաս . . . կըսէ ու պատուհանը բանալով,

— Բարի լուս միւսիւ Լեւոնիկ, հրամ-
մեցէք . . .

— Աստուծու բարին տիկին, աս ո՞ր են
օրիորդները, չեն ելեր . . .

— Տեսա՞ր քա, նայէ ինծի հարցունող
կայ . . . աղջիկներուն, պիտի տիւզ օրիորդ-
ները . . . զաթը գործը անոնց վրայ է . . .

— Դուք բանա՞մ տէ ներս եկուր միւ-
սիւ Լեւոնիկ, ինծի կու գայ քի, պարտէզին
կողմն են . . .

— Բա ինչո՞ւ ներս կը կանչես կոր . . .

— Սուս ճանրմ իսկ քիս պիտի բերես . . .

— Հրամմեցէք միւսիւ Լեւոնիկ . . .

— Դուք անհոգ եղիք, ես պարտէզին
կողմէն կ'երթամ անոնք կը գտնամ, ըսելով
տանը ետեւի կողմը կ'անցնի, մինչ ասդին
Գիրգորիկ աղան անհամբերութեան կ'աս
կապուտ կտրած,

— Տէ հրամմէ նայինք, կրնա՞ս աղջիկ-
ները բուլլու իս բուլլու ըներ ոըտեղը . . .

— Ինծի նայէ Գիրգորիկ աղա, աս ալ
ասանկ տեղ մընէ, թող երթան աղջիկները
սէրբիւմիշ ըլլան . . .

— Բէք աղէկ, ես չէի ըսողը, անոր
սերբինթին ետքէն կը հասկընաս, հիմա ինչ
ըսեմ նէ պօշ է . . .

Մինչ այր և կին կը խօսակցէին, հոգա-
ծեփ սալօնին մէջ, զուրսէն անծանօթ ար-
դեկ մը պատուհանին մօտենալով,

— Գիրգորիկ աղան հո՞ս է . . .

— Հոս է, ի՞նչ կայ քի . . .

— Հստամպօղէն ֆամիլեայ մը եկեր են, առնեմ պերեմ . . .

— Իշտէ պու, կըսէ, Գիրգորիկ աղա, ու կըսկսի պտուտակի պէս սենեկին չորս կողմը պտրտկիլ . . . քա ո՞վ են ասոնք քի սօլուխնին հոս են առեր . . .

— Քա ճանրմ կայնէ նայինք, տալոջս թախրմը չըլլան . . .

— Տալդ ալ վար ասնի պուտակդ ալ, քեզի ո՞վ բաւ քի Գիրգորը Ալէմ-տաղի օթէլ պացեր է տէյի . . . հոս եկողը տեղ մը կը գանայ կլոթը մէջը կը խօթէ, մենք զաթը հոս միսաֆիր, աս՝ միսաֆիրին միսաֆիրը, կըլլա՞յ բան է . . .

— Մօ ըսէ քի հոս հրամանն . . .

— Քա ճանրմ կեցիր նայինք, մէյ մը Յովակիմին օթելը զրկէ տեղերնին հաղըրն են տէ կտքէն կը տեսնուինք . . .

— Եղած բան չէ՛ . . . ամօթ կըլլայ . . .

Քիչ վերջը, վեց մեծ, չորս պղտիկ, խնդում երես և պ խճանքերով Գիրգորիկ աղայի առնը կը մօտենան . . .

— Աչքերնիդ կը պաղէր կոր . . . բարի լուս ձեզ . . .

— Բարով եկաք, աս ո՞ր հով փչեց . . .

— Սուս եղիր, Մաթոս աղան սաթլը-ճանէն աղատեցաւ նէ հէքիմները Ալէմ-տաղի տար ըսին, էյ իմացանք քի դուք ալ տուն բռնեի էք տէյինէ, չիտակ խելք ըրինք հոս եկանք . . .

— Բէք աղէկ մտմտացեր էք, թօփիկ մը կը նստինք . . .

— Կընիկ սա բալթօս տուր տէ ես Բոտամպօղ իշնամ, թէլէկրաֆ առի, խըյախ սըլալթ գործ մը կայ եղեր . . .

— Տաղա կիշնայ կոր թէվէյիս, ինքի-ղինքիդ եկուր Գիրգորիկ աղա, հալըդ վախարդ տեղը ըլլայ նէ իշտէ ասանկ կու գան, հաղդ կ'ուտեն տուլա կընեն . . .

— Քա ո՞ր գիրքը դրուած է քի տասը հոգի միսաֆիր գան տէյի, ասոր աս տեղը Ալէմ-տաղի է, խաղա՞ր ես . . .

Մէկ կողմէն հիւրերը տունը կը լեցուն, ու մէկիկ մէկիկ Գիրգորիկ աղայի սենեակը մանկով . . .

— Բաւե Գիրգորիկ աղա . . . աչքդ կը պաղէր կոր . . .

— Բարի լուս Գիրգորիկ աղա . . . միսաֆիր կուզէ՞ր . . .

— Վա՛յ . . . Գիրգորիկ աղա՛ . . . տե՛սա՛ր, ասանկ կուգանք կը դտնանք քեզի . . .

— Էյ աֆէրիմ Գիրգորիկ աղա, հոս կուգաս տէ մեզի չես ըսեր . . .

— Իշտէ մենք եկանք Գիրգորիկ աղա, Ալէմ-տաղին մինակդ քեզի չենք ձգեր . . .

— Գիրգորիկ աղային ծառքը պագէք չօճուխներ . . .

Գիրգորիկ աղան առանց բառ մը արտասանելու անկիւնը կծկուած պոսւ շանէն դուրս կը նայի, մինչ օրորդները որոնք պարտէզը միւսիւ Լեւոնին հետ կը տեսնուէին, հիւրերուն գալը իմանալով ներս կը վազեն և կանացի պաշկններու շափրթուք մընէ կը փրթի . . .

— Իշտէ սիրտերնիդ կը նեղանաւ կոր պէլքի, կըսէ հիւրերէն մին, եկանք չէնցուցինք . . .

— Էյ բարով եկաք, իրիկուան պիտի դառնա՞ք, կըսէ Գիրգորիկ աղան սուս ժըպիտ մը չինելով բերնին երկու կողմը . . .

— Տէր ողորմայ, Սամաթիայէն հոս եկեր եկեր ենք նէ ինտօր դառնանք Գիրգորիկ աղա, կըսէ հիւր տիկինը յօնքերը վեր առնելով . . .

— Էյ տուն մը գտա՞ք պարէ, սիրիւ ալ էք սանքի . . .

— Ատ ինչ խօսք է, Գիրգորիկ աղա . . .

— Սանքի Յովակիմ աղային օթելն ալ կայ ամա, ինձի կ'ուգայ քի խալապալըս է տեղ չիգայ, հէմ դուք ալ սիրիւ էք, կէնէ տուն մը բռնելնիդ նայեցէք . . .

— Խելքի՞դ եկաւ Գիրգորիկ աղա, կըսէ տիկինը աչքերը բանալով, մեզի միսաֆիր պիտի ըլլան, կը ձգեմ քի հապանճի տեղ երթան տէյի . . .

— Էյ մանք ալթըխ ելլանք տէ տունը իրենց ձգենք անանկ էնէ, սառտէլային ֆըչին պիլէ վրան երկու մաս տեղ կը ձգեն քի չալա առնէ տէյի . . .

— Ճանրմ Գիրգորիկ աղա, խօսք կ'առնէ Թուխճան աղա՛յ, մատամս խուլ ունի տէ անոր համար եկանք, ալջիկներ ալ աս տարի շատ բան քաշեցին, է՛հ ես ալ օլտուլսճա հալափոխի մը պէտք ունէի անոր հա՛մ . . .

— Բէք աղէկ ճանճմ, բան մը ըսած չունինք, բարով եկաք հազար բարի ըսելով կնոջը ականջն ի վար,

— Կընիկ ես վաղը կ'իշնամ . . . գիտցած եղիր . . .

— Ինչո՞ւ, ինչ կայ քի . . .

— Երթամ սառաֆ մը գտնամ տէ փարայ վերցունեմ . . .

— Պօշ լախըտը, քիւլ ըլլալու չե՞նք եւ . . . չօք չէյ, ճէպդ տասը քսան օսկի չունիս զահէր . . .

— Քեզի ո՞վ ըսաւ քի Բահտի-Լիօնէն հոս չիւղէ պացաւ տէյի . . . աստար սիւրին եօղուռո հայ ուտենէ, քսան չանալս բան կ'երթայ . . .

— Ինծի խողը պիտի դնես հասկըցար, աս ինծի Ալէմ-տաղի չեղաւ, մէզառ պաղի եղաւ, դուն ասանկ թապիէթ չունէիր նէ . . .

— Պէ պապամ, ասանկ կընեմ կոր տէ, առը խովանի պէս կը լեցուին կոր տունս, ես կտորճիկ մը ծարերը թող տամ նէ ինչ պիտի ըլլայ հալըս . . . :

Սա վերի պղտիկ իրական օրինակը բաւական է կարծեմ համոզելու թէ, երբ մարդ Ալէմ-տաղի կ'երթայ, անպատճառ հիւրեր կուգան կը լեցուին, անհանգիստ ընելով թէ նիւթապէս և թէ ֆիզիզապէս :

Ալէմ-տաղին այն վայրն է, ուր գացողը անպատճառ պէտք է յարմարի իր շուրջը գտնուողներուն : Պէտք է կոյր ըլլայ ու չի տեսնայ բոլոր ծուխի կեղծ բարեկամական տեսակցութիւնները, ականջները խուլ ըլլայ քիչ մը, չի լսելու համար այն տեսակ տեսակ բամբասանքները, որք կը հասնին իրեն :

Ալէմ-տաղի օդափոխութեան դացող ընտանիքները, փոխանակ օդի, ընտելուն ալ կը փոխեն, դեմքէն թոյն վաղող անհատին, ինչպէս կըլլայ, վարդեր կը բացուի այտեւուն վրայ :

Առաջները հայ ընտանիքներ միայն կերթային, ամիս մը վայելելու համար ջուրի այդ չքնաղ գիւղակը, հիմա Մովսիսի Ժողովուրդն է որ հոգի կ'ուտայ, այնպէս որ այս տարի ամենէն քաւիկ հող ղիմողները ատոնք եղած են :

Բայց ի՞նչ թուալէթներ Աստուած իմ :

Կիրակի դժբաղդութիւնը ունեցայ հող գտնուելու : Պահ մը կարծեցի թէ Եւրոպայի աղջիկներ էին տեսածներս, բայց շատ չի քչեց, ճերմակ միսօները մատնեցին եղեւթութիւնը :

Հող տեղի պանդոկապետին հետ պարզ մէկ տեսակցութիւնս համոզեց զիս, սա անուրանալի ճշմարտութեան թէ՛ այս տարի համ հոտ չի գար այդ գիւղը :

— Աստուած տայ Յովակիմ աղա, բողմութիւնը շատ կը տեսնամ կոր օթելիդ մէջ . . .

— Ձեզէ աղբար, սաղ սէլամէթ չի գային . . .

— Բայց հարկաւ կը վճարեն կոր . . .

— Կեցիր որ ըսեմ : Աս մարդիկը այնչափ էքօնօմին կը սիրեն քի, մէկ քիւլպատին չորս հոգի կը կռծէ կոր, և մէկ քաւեօլան երեք հոգի կը պառկին կոր . . .

— Աւելի աղէկ, քեզի տեղ կը վաստակցեն, անանկ չէ՞ ըսի հեզնական ձեռով մը . . .

— Այո՛, բայց գրողանս չի վաստակիր կոր, ատ ի՞նչ ընենք . . .

— Դրամ չե՞ն վճարեր, երբ հարցուցի . . .

— Ատոնք ալաֆուսիկայ ըլլալուն, թապլըտօթի նստած ատեննին, կնիկներնին կը նստի կոր էրիկմարդներնին ալ ետեւնին կը կենան կոր, սէռվիս ընեն տէյի, պատառ մը իրենք կուտեն, պատառ մընալ կոնակնին իքում կընեն կոր, անանկ քի, մէկ հողի փարայ կ'ուտայ կոր, երկու հողի փորը կը կշտացնէ կոր . . . :

Ահա այս տարուան կեանքը յ'Ալէմ-տաղը, ուր կը պակսի համն ու աղը :

ԼԻԼԱ

PROFESSEUR ANGEL

Վկայեալ Բարիզի եւ Պեռլինի
համալսարաններէն

Ամէն անոնք, որոնք կուգեն քիչ ժամանակուան մէջ, լախտ դիւրամադելի պայմաններով հիմնովին սովորիլ Դերմաներէն լեզուն՝ ինչպէս նաեւ Ֆրանսերէնը

ԱՌԱՋԻՆ ԱՌԹԻՒՆ

պէտք է դիմեն Պանթե-գափու Բալուգաի վաճառատունը, ուրկէ պիտի կրնան ստանալ հարկ եղած մանրախափութիւնները դասասխօսութեան առթիւ :

ԳՈՒՆԻԿ ՕՐԻՈՐԴՆԵՐ

Վերնագիրս կարդացող յարգելի ընթերցողներէս անոնք որ՝ ընդհանրապէս օրիորդներու ախ-ջիւր . . . ըսելու սովորած են, սեր-բապղծութիւն մը ըրած ըլլալն պիտի վըճուեն, բայց, վստահ եմ որ եթէ յօգուածս ամբողջովին կարդան, խել մը օրիորդներու համար գուհիկ բառը շատ յարմար և արդարացի անական մը ըլլալը պիտի հաստատեն . իսկ անոնք որ՝ այդ տեսակ օրիորդներու տափալուծենէն զոգուած, անոնց ալ-ջիք (անլի) անունը կուտան՝ վկայ ձեզի Բ. Լուսինեանը, այդպիսեաց համար զըւհիկ անականը շատ չնչին բառ մը ըլլալը պիտի յայտնեն : Վասն զի, ինչպէս որ բարոյական ճիւղանցարքիս ունեցող երիտասարդներ կան և մենք անոնց սիւլայ կը կոչենք, այնպէս ալ ստորին, անվայել բարքի տէր օրիորդներ կան, զորոնք՝ հակառակ մեր առ զեղեցիկ սեռն ունեցած յարգանաց՝ զըւհիկ կամ ջիւլի անուանելու կ'ստիպուինք, ինչու որ ասոնք աւելի աւերիչ հարուածներ կուտան ընկերութեան քան թէ առաջինները :

Ընդունուած ճշմարտութիւն մ'է թէ՛ գեղեցիկ սեռի այս մատաղ ներկայացուցիչները, այսինքն գեղատի օրիորդները, իրենց լեցուն, հրապուրիչ ու երբեմն առաքիմիսիել կործարհնուն տակ, առնական սրտերէ շատ մը աւելի զգայուն և զիւրաքել փափուկ սրտեր կը կրեն, անոնց զգացման թելերը՝ զժաղաղաբար բազում անգամներ աւերիչ, յոռի և անհաճոյ թրթուռներու կ'ենթարկուին, յաճախ ցաւալի և ոչ-պատուաբեր հետեւանքներ մը թողլով :

Կան ա'յն տեսակ օրիորդներ, որոնք չ'կրնալով իրենց . . . զգացումներնու չափ մը դնել, անսրբելի մրով մը կը մրտեն իրենց կուսական անարատ անունը, ընկերութեանց մէջ արգահատելի տեղ մը զբաւելով, նոյնպէս կան նաեւ այնպիսի հաճոյամոլ օրիորդներ, որոնք՝ իրենց հոգին հաճոյից գերին ըրած՝ բանականութեան սոսկալի ոտիները դարձած են, անլուր եղեւնագործութիւններու հեղինակները ըլլալով, վասն

զի, ինչպէս մեծ հոգեբանները ըսած են թէ՛ « անհամեստ, անպարկեշտ հաճոյքը՝ հոգւոյն ժանգն է, և այդ տեսակ հաճոյից գերի եղողները՝ առաքինութեան դէմ դաւաճանութիւն ընողներ են » այնպէս ալ՝ այդ հաճոյամոլ օրիորդները, բոնականութենէ, առաքինութենէ հրաժարելով արժանապատւութիւն կոչուած բարձր յատկութիւնը իր բառ մը ընդունած են, և այնչափով ալ չ'զոհանալով, ազեղ սեռէն ոմանք՝ իրենց մոլութեան զոհն ընել աշխատած են, և այդ սեռին վրայ ունեցած հրապուրելու առաւելութիւնովն շատ անգամներ յաջողած ալ են, ու զանոնք իրենց քրահաճոյից գերին ընկելով ալ և ալ սղոտտ արարքներու մը դած են, անոնց ընտանիքին կամ ծնողքին՝ բարոյական մահացուցիչ վէրքերով կործանում պատճառելով :

Տուցն մնացած օրիորդներէ մի քանիները, սուրհական կիրքերնուն յազուրդ տալու համար համարձակօրէն և կամ իրենց բառով ճարպիկօրէն աշխատելով՝ Զեմիլիովի կարգը անցուցած են, ո՛վ մեծագործութիւն ! և այդ կիրքերնուն կուրօրէն գերին դաւնալով՝ առանց նոյն իսկ թողուցած ազատ հետքերնին նկատի առնելու, ամէն տեսակ անհաճոյ և աղիտարեր ընթացքներու մէջ՝ կը գտնուին միշտ ընտանիքներ աւերելով, և վերջապէս իրենց ետը կործանելով : Որովհետեւ ասոնց որդեգրած կիրքը՝ այն տեսակ զօրութիւն մ'ունի որ, հրամայելու համար ստեղծուող հոգւոյն՝ և ծառայելու համար ստեղծուող մարմնոյն պաշտօնները իրարու հետ կը փոխանակէ, այսինքն՝ հոգին կործանելով մարմնոյն գերին կը դարձնէ, ամենագուհիկ, զգուելի արարքներով զայն արատաւորելով : Ահա՛, այդպիսի քայքայիչ կիրքի գերի եղող հաճոյամոլ օրիորդներու համար է որ գուհիկ կ'ըսեմ, որոնց թիւը և տեսակը զժաղաղաբար այժմու հրապարակին վրայ շատ են և հետզհետէ ալ կը շատնան :

ՆԵՐՍԵՍ ԶԱՔԱՐԵԱՆ



ՄԱՄԻԿԻՍ ՏՈՊՐԱԿԷՆ

== Ն'յարագրական գրուածք մը կը պարգէ իրաւան կեանքի պատկերները, եւ կը մզէ զմեզ խորհրդածել բն'յերաբանական վիճակին վրայ:

== Աղբասներուն մէջ աւելի շուայներ կը գտնուին, քան քէ հարուստներուն մէջ:

== Զաւակ մը ծնանելը դիւրին է, բայց զայն մեծցնելն ամեն ժամ ծնանիլ է:

== Շատախօս մարդ մը լռեցնելու միակ նամբան, անկէ նուազ խօսիլն է:

== Գրեթէ միշտ մարդ ինքզինքնէն գոն լինելուն համար է որ ուրիշներէն դժգոհ է:

== Աւելի աղէկ է « ի՞նչ պիտի ընեմ քսելով մտածել », քան քէ « ինչո՞ւ այս բանն ըրի ըսելով », զոչալ:

== Գանի որ մարդը կապրի, բանասեղծութիւնն ալ պիտի ստորի, զանազան ձեւերու տակ:

== Տուր ինձ կնոջ մը գիրք եւ ըսեմ քեզ իր բնաւորութիւնը:

== Բարոյականի նշանիս դասախօսները կանայք են: (Իրա՞ւ կըսես . . . Ծ. Խ.):

== Առաքինութիւն եւ երջանկութիւն մայր ու աղջիկ են: (Ո՛ւր է հօրախոյրը. Ծ. Խ.):

== Ինքզինքն շատ դժգոհ գտնելը սկարութիւն, իսկ խիստ գոհ ըլլալն ալ անմտութիւն է:

== Սուս մտքերն անգամայն են, եւ սուս սրտերն անտի:

== Խելացի մարդուն լեզուն սրտին վրայ է, իսկ անխել մարդուն սրտը՝ լեզուին վրայ:

== Ո՛րքան գլուխ, ա՛յնքան կարծիք, ո՛րքան սրտ, ա՛յնքան հաշակ, ո՛րքան դեմք ա՛յնքան նկարագիր:

== Սիրոյ վրայ խօսելու համար մարդ պէտք է երիտասարդական արիքին մէջ գտնուի:

== Ինչ որ մարդ մէկ տարուան մէջ կը մտածէ եւ կամ կը շինէ, կիներ մէկ օրուան մէջ կը տապալէ զայն:

== Նրբ սրտն ու խելն իրարու հետ մախառն, առաջինն միշտ հօգուտով կը ըլլայ:

== Ոսկւոյն լաւութիւնը կրակով կը փորձուի, կանանց լաւութիւնն ոսկւով, եւ արանց լաւութիւնը կիներով:

Իզմիլ

ԾԱՂԿԱՌԱՂ-ՑԵՐԵԿՈՒԿ

ԱԶՔԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱՆԻՔ ՆՈՐՈՒԹԻԻՆ ՄԸ

Հագուիլ, շփուիլ եւ աղամանդներով զարդարուիլ, ինչպէս նաեւ տան կարասիներ կոկել ամէն կերպով, առանց քակնիդ պարպելու

Ա. Յ. Լ.

Ա Պ Ա Ռ Ի Կ

Մայր ես, աղջկանդ օժիտը կը մտածես՝ դիմէ՛.

Օրիորդ ես, շիրք եւ ամեն հագուիլ կուզես՝ դիմէ՛.

Երիտասարդ ես եւ շիրք կը սիրես՝ դիմէ՛.

Տարեց ես եւ ցուրտէն պատապարտուի կուզես՝ դիմէ՛.

Տղաքներ ունիս որոնց պիտոյք զանկ կը ճանկնեն՝ դիմէ՛.

Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրգակներու պէտք ունիս՝ դիմէ՛.

Եկածը կաղանդ, է՛ նուէրներ գնել կը փափաքիս՝ դիմէ՛.

Տարին բանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ՛.

Ձեռքդ պարագ ճամբայ բալել է՛նս սիրելի՝ դիմէ՛.

Կուզե՛ս տունդ կոկել ճաշակաւոր կարասիներով՝ դիմէ՛.

Առաջնակարգ եւ տոկոս զուգաներու պէտք ունիս՝ դիմէ՛.

Կուզես շիրք, ճաշակաւոր եւ լաւ տեսակ փողկապներ ու-

նենալ՝ վերջապէս կուզե՛ս արից ցլուխ հագուիլ, շքուիլ,

պծնուիլ

դիմէ՛ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՆ ՇՈՒԿԱՅ, ԳՈՂՈՒՄԸՐԼԱՐ ՓՈՂՈՅ ԹԻՒ 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի, ճերմակեղէնի, ֆանթէզիի, աղամանդի, ժամացոյցներու, չղթաներու եւ ամէն տեսակ կարասիներու ճոխ մթերք մը:

ՎՃԱՐՄԱՆՅ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ զնոյներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5ը չարաթական վճարումը:

2. Կանխիկ զնոյներու համար հարիւրին 5 զեղչ:

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն աղամանդեայ գոհարեղէնները երբ գործածուած բայց անվնաս մնացած ըլլան, հարիւրին 10 զեղչով, իսկ ապառիկ ծախուած եւ անվնաս մնացած միմիայն աղամանդեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով եւ կ'աւանդին:

ՍԱՆԱՐԿՈՒԹԻՒՆ 24.08

28--30

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿ»-Ի ԹԵՐԹՈՒՆԸ 18

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԵՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

10,000 ՏԱՐԻ ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Մ. Սէնթեղի յարուստինէն քսանը չորս ժամ միայն անցած էր զիւս և արդէն ծերունին կղզար մութ ձանձրոյթ մը որ յաջորդած էր առաջին վայրկեանի տենդին : Իր միտքի անաղարտութիւնը պահած՝ և իր խորաթափանձ կարողութեան և հիւրասիրողներուն օգնութեան չնորհիւ Մ. Սէնթեղ կրցած էր 119րդ դարուն աշխարհին վրայ ընդհանուր դադափար մը կազմել : Այս աշխարհը իրեն դառնութիւն և պատրանք կընծայէր : Ինք ժամանակին ինչ որ կը խորհէր ապագայ մարդկութեան վրայ, բոլորովին հակառակը կը տեսնէր այժմի Պատրանքի ենթարկուած էր ոչ թէ անոր համար որ իր արժանիքը ունեցող մարդիկ չեն սիրեր խառնուիլ, բայց որովհետեւ իր երբեմնի տեսութիւնները իրականութեան չէին իսկ մօտեցած : Մերացած կը գտնէր այս նոր մարդկութիւնը, զոր առաջին տեսութեան, դուցէ ոչ առանց պատճառի, իրեն գանդաղ երեւցած էր :

— Մարդիկ որոնք կը բնակին տակաւ պաղով մոլորակի մը վրայ, կը մտածեն, որոնք նոր բան մը չեն ընել և միայն կը գոհանան գործածելով իրենց նախնիքէն մնացած մշտաւորական աշխարհը :

Երկիրը իր բնակելիութեան սահմանը նեղցուցած, ցեղերը միացած և Զինակաւացած, իրեն այնպէս կը թուէր թէ փակուած է հին պարիսպի մը մէջ, անթափանձելի արտաքին ամէն գաղափարի : Յեղեթու այս միացումը չէր պատճառը ներկայ դանդաղութեան, կեանքի պայքարի չգոյութեան, տարբերութեան և միտքի սաւառնումին : Եւ կ'աւելցնէր :

— Դարձէ քաշուած մարդկութիւն մը :

Միւս կողմէ սակայն պէտք է ըսել թէ իր առաջին վայրկեանի հիացումը անախորժ սթափում մը տեսցաւ երբ այցելեց Նախու պատմական իրերու թանգարանը, ուր տեսած էր այնքան ծիծաղելի և անձնորոշ բացատրութիւններ՝ մեր դարուն մնացորդներուն վրայ :

Մ. Սէնթեղ ժամերով թղթատած էր Դիտարանին թուղթերը, աչքը շարժական հեռադիտակի մը կպցուցած որմէ կը տեսնուէր Հրատէ մեկնող նշանները Մեծ-ձերունի-պարոնին ցեղակիցները պատրաստակաւ նստած կը թարգմանէին ամէն բան, բայց Երկրի բնակիչներուն կողմէ չինուած Հրատի պատմութիւնը ամենէն անպատեհի համառօտութիւնն էր մթնոլորտային անորոշութեանց : Սակայն այս մեծազուլ մարդուկները անբաղդատելի առանձնաշնորհում մը ունէին, որուն չնորհիւ իրմէ ճշմարտապէս բարձր և անբաղդատելի էին : Ասիկայ ուղեղայիններու շարժականութեան և բնական ուժերու գործածութեան զօրութիւնն էր Մ. Սէնթեղ երբ բաղդատութիւնը կընէր իր ժամանակի և այժմեան մարդկութեան, նախկինը առաւելակշիւ պիտի գտնէր, երբ չըլլար սա ինքնաշարժութիւնը, սրնթաց և կամաւոր փոխադրութիւնը : Ի՞նչ պիտի ըլլար այս ուղեղայիններուն վիճակը, ո՞ւր պիտի գտնուէին երբ իրենց նախնիքներուն պէս գիտնին փակած մնացին, իրենց ֆիզիքական անբաղդատելի ուժով :

Այսուհանդերձ, Եւրոպացի գիտնականը, առանց ուղեւոր իր այս տպաւորութիւնները յայտնել զինք հիւրընկալողներուն,

կը փափաքէր շարունակել իր շուրջ աշխարհ-
եան ուղեւորութիւնը : Կուզէր մեկուսանալ
վայրկեան մը , խորհիլ խորհրդածել և հիա-
նալ կամ քննադատել այս մարդիկը որոնք
իրեն հետ կը վարուէին , զինք կապրեցնէին
ցնորքներու մէջ : Ասիկա օրինաւոր զոհա-
ցումը չէր իր հետաքրքրութեան : Մ. Սէն-
թեզ թափանցած՝ իր ստորագրութեան , կը
փափաքէր վերստին գտնուիլ , իր սառնա-
կոյտին հետ , իր դարաւոր քունին ու մո-
ռացօնքին մէջ :

... Մեծ-ծերունի-պարոնին քաղցր ձայ-
նը յայտնեց թէ ժամանակն էր մեկնելու :
Եւ խումբը , միշտ պատրաստ էր , իր կեդրոնը
ունենալով Մ. Սէնթեզը , զայն փոխադրելու
համար ամենէն հեռաւոր երկիրները :

Մեծ-ծերունի-պարոնը մեկնումի նշանը
տուաւ , յայտնելով թէ աշխարհի շրջանը ը-
նել պիտի շարունակեն Արեւմուտքին զէպի
Արեւելք , դանդաղ կամ արագ , ինչպէս որ
ուզէ ճամբորդը :

— Լաւ : Ուրեմն ինծի փոխադրեցէք Մ.
Արեւելք , հոն որուն համար կը գուշակէի
թէ բուստերով պիտի բլրանայ և ժայռա-
նայ : Մասնաւորաբար ուսումնասիրած էի
այդ կողմերը և նոյն իսկ ապացոյցներ ձեռք
բերած էի իր արդի փոփոխութիւնը մատնող :

Այս պահուն Մ. Սէնթեզը յանկարծ բարձ-
րացաւ գետնէն և մէկ ոստումով փոխադ-
րուեցաւ մթնոլորտին ծայրագոյն եզրերը ,
ուր կարելի պիտի ըլլար շունչ առնել : Յե-
տոյ , խումբը սկսաւ շարժիլ կողմնակի , ան-
սովոր արագութեամբ , որու միջոցին Մ.
Սէնթեզը կը տեսնէր թաւալիլը անվերջ հա-
մայնապատկերի մը : Բնական է կարծել թէ
այս փայլակի արագութիւնը արգելք ըլլայ
տեղերն ու իրերը որոշ տեսնելու , կամ զա-
նոնք անորոշ կը դարձնէ : Բայց այնպէս չէր :
Կա՛մ Ուղեղայիններէն ծորող ելեկտրակա-
նութիւնը կաւեցնէր իր կարողութիւնները
կամ նոր կարողութիւններ կ'ստեղծեր անոր
մէջ . կա՛մ արշաւին գերազանց բարձրու-
թիւնը կը գիւրացներ տեսքը ընդարձակ
վայրի մը վրայ : Ո՛րն ալ որ ըլլար , Մ.
Սէնթեզը կը հիանար իր տեսողութեան յստա-
կութեան վրայ :

Հոն էին Ափրիկեան անապատները , եր-
բեմն աւազներով ծածկուած , բայց այժմ

դաւարաւէտ և դետերով ոռոգուած : Անդին
անհետացած էր Հնդկաց ուղկիանոսը ուր
խոնուած էին նոր երկիրներ և եկած միա-
ցած Սօմալիին , Մալտիվեան և Լաքիտալ-
եան կղզիներուն , Սէյլանի և Հնդկաստանի
հարաւային մասին , լեցնելով Օմանի ծոցին
և հասարակածին միջև եղած մասը , որմէ
վեր կը տարածուէր ընդարձակ Միջերկրա-
կան մը : Լեցած էին նաեւ Պէնկալի , և Սի-
ամի ծոցերը , որոնց միջև ժամանակին կ'եր-
կարէր Մալաքալի նիհար ու ոլորտաձև
թերակղզին : Սումաթրա , Պօրնէօ , Ճավա ,
Փիլիպեանք մեկ ցամաք միայն կը կազմէին
միացած Սիամի , Բօչինչինի և Չինաստանի :
Այսպէս , հարաւային Ասիա մը կար , միա-
ցած կեդրոնի Ասիոյ , տարածուած մինչև
Ծ. Արեւելք կամ Ողաղապան Ուղկիանոս ,
կամ Ուղկիանիա :

Մ. Սէնթեզը կը նշմարէր որ բոլոր այս
երկիրը ոռոգուած էր դետերով , նոյն բու-
սականութիւնները կային , նոյն բնակչու-
թիւնը , նոյն շէնքերը , նոյն բուռ քաղաքները :

— Օն անդր , ըսաւ ան , ձայնին մէջ տե-
սակ մը դառնութեամբ , կատարեալ է ա-
մէն բան : Հին աշխարհին ձեւափոխութե-
անէն լան մը չէ մնացած , բացարձակապէս
ոչինչ : Վայրի կենդանիները , թռչուններն
իսկ գրեթէ բոլորովին անհետ եղած են :

— Բայց օգտակար տեսակները երկար
ատենէ ի վեր ընտանեցած են , պատասխա-
նեց Մեծ-ծերունի-պարոնը : Այս պարագան
ձեզ յայտնելու մոռցած էի : Մաս-Չինները
հօտեր ունին իրենց սնունդին համար և բազ-
մաթիւ անասուններ իրենց աշխատութեան
օժանդակելու համար : Անոնք թռչուններ կը
սնուցանեն իրենց օգտակարութեան , նոյն
իսկ իրենց հաճոյքին համար . . . : Գծրազ-
գաբոր մեզի համար անկարելի եղած է
զերծ մնալ միջառնիքէ և սողուններէ որոնք
կը վխտան զանազան տեղեր : Ինչ որ ալ ըլ-
լայ , կրնանք ըսել թէ երկրին գրեթէ ամ-
բողջը օգտակար կերպով կը գործածուի :

(Շարունակելի)

Արտօգուտէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆՅԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ , ԿՐԱՏՍՆ
Պապ.Ալի Գաթեթի Թ. 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐԵՆԵՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Թօփապեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանքաց առկունութեամբ եւ գիններու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց քէյրոփներու եւ տղայոց չիք եւ դիմացկուն փաթիւներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի եւ ուրիշ նմանօրինակ պիտոյից.

աակՍրկո լթիւն չկայ, թիւը 2 զրշ է. Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին.

38—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, չուտ կը չորնան, վրայ չեն ելներ, գոյներնին չեն նետեր, ջուրի եւ անձրեւի կը դիմանան, միուկները կը ջնջեն եւն. եւն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 10—15 փարայ.

Ներսի եւ դուրսի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 20—30 փարայ.

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախորդաց գիւրութեան համար, վաճառատունս պատրաստ է սոյն գներով իր վրայ առնել ամէն գործ, թէ ներկն եւ թէ գործաւորողէիւ մէջն ըլլալով.

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-Համամ, Պագըր-ճըլար թիւ 26, Գ. Աճէմեան. — Գաւառները գործակալներու պէտք կայ, գիւրամատչելի պայմաններով.


3—20

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏՐ, ԱԺԱՆ

ԵԻ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պալիս, Պանճրապու, Ճեղալ-Պեյ խան, բիւ. 10



ԱՆՏԵԼԻՊ

ԱՍԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

ՄԱՍՆԱԻՐԱԲԱՐ

Ֆոնոկրաֆի եւ Գրամոֆոնի
եւ երկկողմ Բլազֆոնի, Կեդրոնա-
տեղի Պանճր Դաբու, Հաճի Պեքի
Էմեմուի կից, Նարոզ Խանի տակ
բիւ. 2: Մանուկի Պանճր Դաբու
բիւ. 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տու-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չաճած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակի Կրամոֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլազֆոն բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
զտնուած բոլոր նմանորինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ճայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանճարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ու չաղրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել
կեդրոնատեղին: